ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/95

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Միասնական սոցիալական ծառայություն
Մասնակից՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3514-2022 գրությամբ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Միասնական սոցիալական ծառայության 22.02.2022թ.-ի թիվ 02/ԳՋ/8628-2022 գրության հիման վրա, 01.03.2022թ.-ին «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.03.2022թ.-ին:

01.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/95 համարի ծածկագիրը:

10.03.2022թ.-ին և 25.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.03.2022թ.-ին:

2. **<u>Միասնական սոցիալական ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Միասնական սոցիալական ծառայությունը 22.02.2022թ.-ի թիվ 02/ԳՋ/8628-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի դեկտեմբերի 6-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից հայտարարվել է ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8 ծածկագրով Ծառայության կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով հինգ կազմակերպություն՝ այդ թվում «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ չափաբաժինների համար:

Համակարգի (eauction.armeps.am) միջոցով հրավերով սահմանված ժամկետում Ընկերությանը ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ:

ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8 ծածկագրով հրավերի 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում և 9.4 կետով սահմանված կարգով Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները և համակարգ չի ներբեռնել ստորագրված պայմանագիրը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով և հրավերի 9.3 կետով սահմանված պահանջները, Ընկերությունը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովի 2022թ. փետրվարի 18-ի որոշմամբ ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ չափաբաժինները հայտարարվել է չկայացած ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8 ծածկագրով հրավերի 1-ին մասի 8.21-րդ կետով սահմանված պահանջի համաձայն՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.03.2022թ.-ին գրությամբ դիմել է «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3514-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ բանավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2022/95 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-ին հայտարարվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն:

iii. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններին մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

v. www.gnumner.am կայքում 17.12.2021թ.-ին հրապարակվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

vi. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 24.12.2021թ.-ի ներկայացրել է բողոք և խնդրել է՝

1. չեղարկել թիվ «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը,

2. պարտավորեցնել թիվ «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին փոփոխել նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականին ընդունված թիվ 2 արձանագրային որոշումը հետևյալ կերպ.

ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ

		ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳԻՆԸ ԸՍՏ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՌԱՆՑ ԱԱՀ-Ի (ՀՀ դրամ)
	ԱՆ ՎԱՆ Ո ԻՄԸ	«ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ
2	«դերձակ» մասնագիտությամբ ուսուցում	360 000
4	«մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում	360 000
5	«կարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում	360 000
6	«համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում	180 000
7	«կարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում	270 000
8	«դիմահարդար» մասնագիտությամբ ուսուցում	270 000
10	«համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում	180 000
11	«մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում	450 000
19	«խոհարար» մասնագիտությամբ ուսուցում	810 000

3. որպես հետևանք փոփոխել նաև նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը՝ թիվ 2 արձանագրային որոշման փոփոխված տարբերակին համապատասխան:

4. կամ չեղարկել/վերացնել նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականին ընդունված թիվ 2 արձանագրային որոշումը, որպես հետևանք չեղարկել/վերացնել նաև նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

vii. Բողոքներ քննող անձը 24.01.2022թ.-ին կայացրած թիվ ԳԲՔԱ-Լ0-2021/118 որոշմամբ Մասնակցի ներկայարրած բողոքը մերժել է ամբողջությամբ:

viii. Պատվիրատուն 31.01.2022թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին է ներկայացրել «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ու որակավորման ապահովումներ ներկայացնելու մասին ծանուցումը:

ix. Հանձնաժողովի 18.02.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն հրավերի 1-ին մասի 9.3-րդ կետով սահմանված ժամկետում և 9.4-րդ կետով սահմանված կարգով Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները և համակարգ չի ներբեռնել ստորագրված պայմանագիրը:

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով և հրավերի 9.3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն որոշել է Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից, իսկ գնման ընթացակարգը 2-րդ, 4-րդ, 8-15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժինների մասով որոշել է հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3514-2022 գրությամբ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի

նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի

ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Միասնական սոցիալական ծառայության կողմից մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-ին հայտարարված «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի «բ» պարբերությամբ արձանագրվել է, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններին մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչով պայմանավորված www.gnumner.am կայքում 17.12.2021թ.-ին հրապարակվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սակայն «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 24.12.2021թ.-ի ներկայացրել է բողոք, որը Բողոքներ քննող անձի 24.01.2022թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/118 որոշմամբ մերժել է: Այնուհետև Պատվիրատուն 31.01.2022թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին է ներկայացրել «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ու որակավորման ապահովումներ ներկայացնելու մասին ծանուցումը: Սակայն Հանձնաժողովի 18.02.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն հրավերի 1-ին մասի 9.3-րդ կետով սահմանված ժամկետում և 9.4-րդ կետով սահմանված կարգով Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները և համակարգ չի ներբեռնել ստորագրված պայմանագիրը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից, իսկ գնման ընթացակարգը 2-րդ, 4-րդ, 8-15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժինների մասով որոշել է հայտարարել չկայացած:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին

հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3514-2022 գրությամբ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/95 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**